**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9**

Դատական դեպարտամենտի կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/37» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «01» նոյեմբերի 2018թ.
ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Էդգար Մելքոնյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ ԳՊ/ԳԱՊ) ՀՀ վարչական դատարանի աշխատակազմի ղեկավար,

*հանձնաժողովի անդամներ՝*

**Գրիգոր Գաբրիելյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Արթուր Թամրազյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ,

**Խորեն Պետրոսյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ:

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Արուս Խաչատրյան՝** (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/Միմ) Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

Նիստից բացակայում էր՝

**Էդգար Տոնականյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի ղեկավար:

**1. ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացվել է 29.10.2018 թվականի թիվ 01.1/27-1/19550-18 գրությունը /կցվում է/:**

Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության վերոնշյալ գրությունը, որոշեց 2018թ. սեպտեմբերի 14-ի N 7 արձանագրությամբ կայացված որոշումները թողնել անփոփոխ:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**2. Տեղեկատվություն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 4-րդ ենթակետով և «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/37» ծածկագրով հրավերի ՄԱՍ II-ի 3-րդ բաժնով («ԱՌԱՋԻՆ ՏԵՂԸ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ») նախատեսված փաստաթղթերի ներկայացման վերաբերյալ.**

«Բի Լայն» ՍՊԸ-ն, «ՓԻ-ՍԻ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ն, «Էֆ-լայն Թրեյդինգ» ՍՊԸ-ն, «ՅՈՒՆԻՔՈՄՓ» ՓԲԸ-ն սահմանված ժամկետում և հրավերով սահմանված կարգով ներկայացրել են հրավերով նախատեսված փաստաթղթերը:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**3. Տեղեկատվություն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված՝ Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ.**

Մասնակիցների կողմից ներկայացված՝ Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված ապրանքի ամբողջական նկարագրերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովը արձանագրել է անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ՝ մասնավորապես՝

-«Բի Լայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի, տեխնիկական բնութագրում բացակայում է երաշխիքի, ինչպես նաև APC 5000 rackmount/tower (SUA5000RM I5U) անխափան սնուցման աղբյուրի համար նախատեսված լինելու վերաբերյալ տեղեկատվությունները,

-«ՓԻ-ՍԻ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի տեխնիկական բնութագրում բացակայում է քարթրիջի առկայության, երկկողմանի տպելու հնարավորության և երաշխիքի վերաբերյալ տեղեկատվությունները:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

***Հանձնաժողովը որոշեց.***

-հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2018թ. նոյեմբերի 03-ին ժամը՝ 11:00-ին:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**Հանձնաժողովի քարտուղարին.**

-մասնակիցների կողմից ներկայացված առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերում իրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2018թ. նոյեմբերի 02-ը ներառյալ, շտկել անհամապատասխանությունները:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ Էդգար Մելքոնյան

Անդամներ՝ Գրիգոր Գաբրիելյան

Արթուր Թամրազյան

Խորեն Պետրոսյան

Քարտուղար՝ Արուս Խաչատրյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
# ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1

Հեռ.՝ (+374 11) 800 033, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

01.1/27-1/19550-18 2018-10-29

ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ԿԱՐԵՆ ՓՈԼԱԴՅԱՆԻՆ

Ի պատասխան 25/09/2018թ.
թիվ ԴԴ-3-Ե-7796 գրության

ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
Ն-12868
30/10/18

Հարգելի պարոն Փոլադյան

Ուսումնասիրելով վերոնշյալ գրությունը՝ հայտնում ենք հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար ՀՀ դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Վերոգրյալի կապակցությամբ, հայտնում ենք, որ «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դրոշմանիշային վճարը զինծառայողների կյանքին և առողջությանը պատճառված վնասների հատուցումն ապահովելու նպատակով նույն օրենքով սահմանված կարգով և չափով ՀՀ պետական բյուջե վճարվող պարտադիր վճար է, որի վճարման պարտականությունը կատարվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում նույն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված չափով դրոշմանիշ գնելու միջոցով: Նույն օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դրոշմանիշային վճարների պարտավորության գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում հարկային մարմինը որոշում է կայացնում դրոշմանիշային վճար վճարողից (եթե դրոշմանիշային վճարը, նույն օրենքի համաձայն, պետք է կատարվի հարկային գործակալի միջոցով, ապա հարկային գործակալից)

ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում դրոշմանիշային վճար վճարողին (հարկային գործակալին): Մինչև գումարի գանձման վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալը պարտավոր անձի գույքի վրա հարկային մարմինը կարող է դնել արգելանք կամ կիրառել սահմանափակում՝ ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով:

Միաժամանակ, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 10-րդ պարբերության համաձայն՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտներ են համարվում ՀՀ պետական և համայնքների բյուջեներ վճարվող հարկերի, տուրքերի և օրենքով սահմանված վճարների, դրանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով հաշվարկվող տույժերի և տուգանքների ամբողջությունը, որոնց հաշվառումը, հաշվառման և (կամ) վճարման նկատմամբ հսկողությունը, մուտքերի ապահովման վերահսկողությունն օրենսդրությամբ վերապահված է հարկային մարմնին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ դրոշմանիշային վճարները հանդիսանում են հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտներ:

Միաժամանակ, «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի միասնական հաշվում առկա գումարներից դրոշմանիշային վճարների պարտավորությունները չմարելու հետ կապված հայտնում ենք, որ դրոշմանիշային վճարների մասով պարտավորությունները միասնական հաշվի միջոցով չեն մարվում, այլ մարվում են այդ վճարի գծով պարտավորությունը հաշվառող՝ պետական բյուջեի գանձապետական հաշվի միջոցով:

Հայտնում ենք նաև, որ մասնակիցների ներկայացրած հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատումն իրականացնում է գնահատող հանձնաժողովը՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Միաժամանակ հայտնում ենք, որ Օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԿԱՐԵՆ ԲՐՈՒՏՅԱՆ

Կատարող՝ Հանրային ֆինանսների կառավարման մեթոդաբանության վարչություն
հեռ. 011-800-258